Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«19»դեկտեմբերի 2017 թվական
Պետական գրանցման համարը 1041772

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» դեկտեմբերի 2017 թվականի N171-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 01-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունվարի 13-ի «Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց վարձակալներին վարձավճարից ազատելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2008 թվականի հուլիսի 3-ի N 28-Կ/Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 01-Ն հրամանով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետում և 3-րդ կետի 1-ին ենթակետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերի սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց մակերեսների ճշտման, մշակության ու խնամքի ընթացքի վերահսկման համար ստեղծվում է հանձնաժողով՝ Արցախի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ պատասխանատու ստորաբաժանում) ղեկավարի գլխավորությամբ, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի մասնագետի, պատասխանատու ստորաբաժանման մասնագետների և տարածքային գյուղատնտեսների մասնակցությամբ:».

3) 5-րդ կետում «համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնում» բառերը փոխարինել «պատասխանատու ստորաբաժանումում» բառերով:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Հ. Հակոբյանին՝ սույն հրամանը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ